ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2025թ. թիվ 87-Ա

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդի հետ պայմանագրի կնքման մասին 2025 թվականի փետրվարի 13-ի արձանագրությունը և ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի հունվարի 14-ի թիվ 20-Ա որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ալվարդ Վազգենի Գրիգորյանին 2025 թվականի փետրվարի 18-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 2028 թվականի մարտի 1-ը ներառյալ՝ նրա 65 տարին լրանալը:

2. Ա.Գրիգորյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 14
ք.Վանաձոր